

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏԱՐԱԿԵ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳՐԻ  
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРЦАХСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА

1(25) 2012

ST 325

Պատմություն

ՑԱՐԱԿԱՆ ՈՒԽՍԱՏԱՆԻ՝ ՄԵԼՔԹԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՎԵՐԱՅՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԴՐԱ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ՀԵՏԵՎՎԱՆՔՆԵՐԸ

Վ.Ռ. Բալայան

Զնայած Թուրակչայի պայմանագրից հետո Պարսկաստանի և Ռուսաստանի միջև ռազմական զորդողությունները շարունակում էին, այնուամենայնիվ, պարզ էր հակամարտության նլրը: Արցախի մելիքները, ովքորված ռուսական զենքի հաղթանակներով և, հաշվի առնելով արցախահայ վետականության վերականգնման վերաբերյալ ցարական կառավարության՝ նախկինում տփած խոստումներն ու հավաստիացումները, 1806թ. մշակում են Արցախի ինքնավարության ծրագիր և, արքունիք հանձնելու համար, ներկայացնում Մինաս Լազարին:

Մելիքներն առաջարկում են Ղարաբաղում վերացնել խանական իշխանությունը՝ վերականգնելով մելիքների իրավունքները: Նպատակահարմար էր գտնվում Նոր Նախիջևանի հայությանը վերապահված արտոնությունները տրամադրել նաև արգավահայությանը: Մելիքներն անհրաժեշտ են համարում Ղարաբաղի լեռնային մասը ինքնավար կարգավիճակով «Արցախի օկրուգ» անունով դնել Ռուսաստանի գերիշխանության տակ: Այստեղ պետք է գործնք հայ հանրությանը բնորոշ կառավարման ու դատական համակարգներ, որոնք օրենքի ձևով ամրագրված կլինեն «Հայկական դատաստանագրում»: Երկրի կառավարման ոլորտում լայն կիրարկություն պիտի ստանար հայոց լեզուն: Որպես հպատակության նշան՝ մելիքները պարտավորվում են ցարին հարկի ձևով վճարել 4.000 չետքերտ զորեն և 4.000 ուկի: Նախատեսվում էր, բնակչության ածին զուգահեռ, շատացնել հարկերի քանակը: Մելիքները գրում են. «...մեզ շնորհի, ինչպես այդ խոստացված է եղան վաղ ժամանակներից, նոյն ամենաողորմած արտոնությունը..., որպեսզի մեր իրավունքը և դատավարությունը հիմնված լինեն մեր նախնիների ստվորությամբ եւ ավանդությունների վրա....: Եվ եթե մեզ արքած կլինի այսպիսի արտոնություն..., այն ժամանակ կտնանք, թե ինչի նաք ընդունակ մենք...»<sup>1</sup>(35, էջ 40-41):

Այս ծրագրային դրույթների տակ ստորագրել են Վարանդայի տեր մելիք Զումշուր Մելիք-Շահնազարյանը, Գյուլիստանի տեր մելիք Բաղրը և մելիք Աբով Մելիք-Բենգլարյանը, Մելիք-Հռվիաննիսյանները, Զքաբերդի տեր մելիք Հաթամ Մելիք-Մնժումյանը, Խաչենի տեր մելիք Ալահենրդի Մելիք-Միրզախանյանը և Դիզակի տեր մելիք Ղահրաման Մելիք-Ավանյանը<sup>2</sup>(35, էջ 40-41):

Հայկական պետականության վերականգնման վերաբերյալ համապատասխան ծրագրեր է կազմել նաև Քրիստովոր Լազարյանը՝ 1827-28թթ. Ք.Լազարյանը զարական արքունիք ներկայացրեց «Հայերի մասին», «Հատուկ իշխանական կալվածքի մասին», «Վրաստանի և հարակից մարզերի վերաբերյալ մի քանի մոտենցումների շուրջ», «Վրաստանի վերաբերյալ եղած մոտենցումների շուրջ լրացումների մասին» վերտառությամբ ծրագրեր, որտեղ հեղինակն անդրադարձել էր զարական Ռուսաստանի հովանու ներք հայկական թագավորություն կամ

իշխանություն ստեղծելու, զինված ուժերի, մելիքների և հռոմեականության կարգավիճակի, Էջմիածնի կաթողիկոսական աթոռի, ասիական տարրեր երկրներից հայերին Արևելյան Հայաստան հավաքագրելու և նմանատիպ այլ հարցերի<sup>3</sup>(41, էջ 34-36):

Այս, ինչպես նաև նախորդ ժամանակներում ուստական արքունիքին ներկայացված հայկական պետականության վերականգնման ծրագրերն այդպես էլ մնացին թղթի վրա: Սակայն դա չսանգարենց Արցախի մելիքներին՝ շարունակելու պայքարը հայրենի երկրամասն ազատագրելու համար: Աստանդական դարձած մելիքները նորից բռնցին տունդարձի ճանապարհ՝ փորձելով հայրենի երկրամատում կյանքի կոչել իրենց վաղեմի ծրագրերը:

Նմանօրինակ քայլ առաջինը ճենքարկեց Վարանդայի Մելիք-Զումշուդ Շահնազարյանը: Նա դիմում է ուստական իշխանություններին՝ խնդրելով թույլ տալ վերադառնալ հայենի երկրամաս, որովհետև ինքը և իր հայրենակիցները չունեն իհմանական բնակության վայր<sup>4</sup> (2, էջ 33): 1805թ. մելիք Զումշուդը Լոռիում գտնվող իր կալվածքները, և ունեցվածքը վաճառում է ուստականության կոմս Մուսին-Պուշկինին և, իր համերկրացիների ու հարազատների հետ, վերադառնում Արցախ<sup>5</sup>(9, էջ 113): 1817թ. սեպտեմբերի 5-ին Վ.Մադարովը Ա.Կուտուզովին ուղղված զեկուցագրում նշում է, որ Վարանդա է վերադարձել 187 ընտանիք<sup>6</sup>(29, էջ 726):

Մելիք Զումշուդ Շահնազարյանի օրինակը վարակիչ էր Արցախի մելիքական մյուս տների ներկայացուցիչների համար: 1812թ. Մելիք Բնալարյաններն իրենց հպատակների հետ միասին Բոլինիսի և Բորչալուի զավառներից տեղափոխվեցին և հաստատվեցին հայրենի Գյուլիստանում:

Մինչև XIX դարի կեսերը Գյուլիստանի զավարի 18 օյուենը Մելիք-Բնալարյանների տիրապետության տակ էին գտնվում: Հայրենիք վերադառնալուց հետո այս տոհմը տրոհվեց երկու մասի. Մելիք Հովսեփի թռռները կրեցին Մելիք-Հովսեփյան ազգանունը, իսկ Մելիք-Բնալարի ժառանգները դարձան Մելիք-Բնալարյաններ<sup>7</sup>(18, էջ 100): Դրա մասին է վկայում նաև Ներսես Աշտարակեցին<sup>8</sup>(20, էջ 1):

Հայրենաշեն գործունեություն ծավալեց Հասան-Զալալյան մեծանուն տոհմի՝ Կուսապատում հաստատված Աթաբեկյանների ճյուղը: Առանձնակի նոանդով էր գործում 1814թ. մելիքական տիտղոս ստացած Վանի Աթաբեկյանը: Նա իր գերդաստանով Շարիից տեղափոխվեց և, հաստատվելով հայրենի Կուսապատ օյուեն, կարճ ժամանակամիջոցում ավերված բնակավայրը շենացրեց:

Վանի Աթաբեկյանը իր հայրենակիցների հետ միասին վերաշինեց ու հիմնեց նոր օյուեն՝ Մեծ Շենը, Մոխրաթաղը, Կարմիրավանը, Շաղկաշենը, Ենգիջան, Մաղավուզը, Լյուլասազը, Գյուլաթաղ օյուենը<sup>9</sup>(34, էջ 42-45):

Յարական իշխանություններն այնքան էլ տրամադրված չէին՝ թույլ տալ Արցախի մելիքներին՝ վերադառնալու հայրենիք: Նրանք գիտակցում էին, որ հայրենի հողի վրա դարձերի ընթացքում պետական կյանքով ապրած մելիքական տները հայահավաք ուժ կրանան և, վատ թե ուշ, նորից օրակարգում կհայտնվի հայոց պետականության վերականգնման հարցը: Պատահական չէ, որ զարական իշխանություններն ամեն կերպ փորձում էին խոշնութել հայրենադարձությանը:

Հովակիմ Լազարյանը և Ալեքսանդր Խուդաբաշյանը զարական իշխանությունների հարուցած դժվարությունները կանխելու նպատակով 1816թ. օգոստոսին դիմում են Երմոլովին «վասն խղճալի մնացորդաց մելիքաց Ղարաբաղու և Սղնալու, որը զամենայն ստացուածս իրենաց կորուսնալ՝ իբրև զտառապնալ մուրացկանս ի Տփիս քաղաքի և այլ ուրեք աստանդական շրջեն առնելով ապրուստ իմն կամ զելս կեցութեան ... նորա ի դրանէ ողորմածագուններ կայսերն հայցելոյ, զի բայ է լինելոց նոցա, եթէ դարձուացեն ողորմենացն այնցիկ, զոնէ մասն ինչ ի գեղօրէից նոցա և ի հորոց, որով կարասցեն ապրիլ և անցուցանել զենանս իրենանց»<sup>10</sup>(19, թղթ. 155, վավ. 33):

Բազում արգելքներ հաղթահարելով, վերադառնալով հայրենիք՝ Արցախի մելիքները տեղում նոր դժվարությունների էին հանդիպում: Նրանց կալվածքներին տեր էին դարձել թուրք-թաթար խաներն ու բնելիքները, կամ էլ նորաբույս հայ վաշխառուներն ու զարական արքունիքին հավատարիմ ծառայող զինվորականները:

Այսպես, 1816 թվականից մինչև 1821 թվականն ընկած ժամանակահատվածը զեներալ Վ.Մադարովին անցան նախկինում Մելիք-Շահնազարյաններին պատկանող 10-ից ավելի օյուեներ<sup>11</sup>(37, էջ 84; 20, թ. 1-3): Ճիշտ է՝ Մելիք-Շահնազարյանները դատական հայցերի միջոցով փորձում էին ետ վերադարձել կորցրածը, բայց՝ ապարդյուն: Այդ տոհմի ներկայացուցիչներն ստիպված հնտագայում զինվորական ծառայության մոտան:

Հայրենի երկրամասում տեղի ունեցող նոր զարգացումներից առմասն չմնացին նաև Գանձասարի Հասան-Զալալյան կաթողիկոսները: Դեռևս 1786թ., Շուշիի քանտում, Իբրահիմ խանի հրամանով, սպանվում է արքալսահայության ազատագրական պայքարի անխոնջ առաջնորդներից մեկը՝ Աղվանից կաթողիկոս Հովհաննես Հասան-Զալալյանը:

Առանձնակի ատելություն ունենալով Հասան-Զալալյան տոհմի նկատմամբ՝ Իբրահիմ խանն անգամ համաձայն էր Գանձակի խանի հովանու տակ գտնվող Գանձասարի հակաթոռ ճանաչված Տեր Խարայնլին հոչակել Աղվանից կաթողիկոս<sup>12</sup>(4, էջ 182-183): Իսկ Ամենայն Հայոց Ղուկաս Կարնեցի կաթողիկոսը 1787թ. կոնդակով արդեն հաստատել էր Խարայնլին՝ որպես Աղվանից կաթողիկոս<sup>13</sup>(21, թղթ. 241, վավ. 205թ, թ. 14-16):

Նման պայմաններում կաթողիկոսական աթոռի օրինական տիրոջ՝ Հովհաննես Հասան-Զալալյանի նորոր՝ Սարգիս Հասան-Զալալյանի համար անտանելի կացություն է ստեղծվում, և նա ստիպված հաստատվում է Գանձակում: Նա այստեղ մեծ աջակցություն էր ստանում Զավադ խանի ու այնտեղ ապաստանած մեկից Մեծիումի կողմից, որոնց կողմից էլ «Ճեռնադրեացաւ կաթուուիկոս ի Գանձակ՝ ի Ելիսավետապոլ ի թուին ՌՄԽԳ (1794թ.)»<sup>14</sup>(24, էջ 348-349):

1795-96թթ., պարսից Աղա-Մահմադ շահի ավերից ու մահասփյուռ արշավանքների ժամանակ, Սարգիս Հասան-Զալալյանն ստիպված էր հեռանալ Վրաստան, իսկ 1798թ. Ամենայն Հայոց Ղուկաս կաթողիկոսի կողմից նշանակվեց Հաղպատի վանքի ու Վրաստանի թեմի առաջնորդ: 1805թ. Սարգիս Հասան-Զալալյանը վերադարձավ Գանձասար<sup>15</sup>(8, էջ 251) և սկսեց շենացնել հայրենի տունը:

Եփեմ Զորագեղցի Ամենայն Հայոց կաթողիկոսի հասուկ շրջաբերական կոնդակով 1815թ. Աղվանից կաթողիկոսությունը վերացվում է, և նախկինում Գանձասարի կաթողիկոսության մեջ ընդգրկված թեմերը միավորվում են՝ կազմելով Ամենայն Հայոց կաթողիկոսության ներակայության տակ գտնվող մետրոպոլություն: Սարգիս Հասան-Զալալյանին շնորհվեց մետրոպոլիտի աստիճան: Նա միաժամանակ նշանակվեց թեմի առաջնորդ: Այսպես, 1815-28թթ. Արցակի հոգևոր թեմն առաջնորդեց Սարգիս Զալալյանը<sup>16</sup>(22, էջ 20). «...Ճեռնատուութեան աշխարհական իշխանութեան օրինաբանեալ Տերութեանն Ռուսաց վեր առաւ պատի և կոչումն կաթողիկոսական, և տուաւ միևնույն անձին փոխան այնր կոչման պատիւն մետրապոլութեան յԱրքնապիսկոպոսական պաշտամման»<sup>17</sup>(24, էջ 349):

Առանձնապես տպափրից էր Սարգիս Հասան-Զալալյանի փոխանորդ, նրա նորորորդի Բաղդասար Հասան-Զալալյանի հայրենաշեն գործունեությունը: 1830թ. Գանձասարի մետրոպոլիտ դարնալուց հետո, նա, քրդական ցեղավամբերի և թուրք բեկերի գերիշխանության տակ գտնվող հայրենի տարածքները, ըստ Էռութեան, խաղաղ ճանապարհով վերադարձնելու մի աննախադարձ և աննախանակ գործունեությունը:

Բաղդասար մետրոպոլիտը «չո խնայելով ոչ մի ջանք եւ նիւթական զոհաբերութիւն, Մեհիսի Ղուլի խանի աղջկանից և որից բեկերից խլում է իր իշխանական կալածները, որ ընդհանուր առմամբ Դուտխու Քնալբաջար է կոչվում...»<sup>18</sup>(27, էջ 90): Զանազան ցեղերի և, հատկապես, քոլանեցի քրդերի կողմից բրնազավթած հողերի քանակը կազմում էր 196438 դեսպանին, որը վերադարձվեց Դադի վանքին<sup>19</sup>(23, էջ 1):

Այդ կալվածքների հարստության, նրա ունեցած չափերի և վիճակի վերաբերյալ հանգամանալից գրել է Ռաֆֆին «Խոթա վանքի կալվածքները, այդ միլիոնների արժեքը ունեցող ազգային մեծ հարստությունը, կարելի է մի ամբողջ զավառ համարել: Նրանց մեջ, բացի հրաշալի, կուսական անտառներից, բացի ընդարձակ արոտատեղիներից և լեռներից, բացի լայնատարած և արգավանդ վարելահողերից, զնտեղված էին թվով մինչև 100 զյուղեր: Նրանց լեռների բարձրավանդակների վրա և հովիտներում թափառում էին թվով մինչև 20 զանազան խաշնարած ցեղեր...»<sup>20</sup>(28, էջ 572):

Բաղդասար մետրոպոլիտի համար պայքարի շնորհիվ Գանձասարին, Խաթրավանքին, Սուրբ Հակոբա վանքին, Հուրենին, Ամարասին վերադարձվել էին նրանցից բռնազրապահ կալվածքներն ու վյուս սեփականությունները:

Բաղդասար Հասան-Զալալյանը միաժամանակ զարական իշխանությունների առաջ պաշտպանում էր թուրք բեկերի կողմից ոտնահարվող իր հայրենակիցների տարրական իրավունքները:

Ժամանակակիցը գրել է. «... Նա մի ստեղծագործող ոյժ էլ էր, որ ուղղութիւն էր տալիս, որին նայում էին պատկառանքով: Անդամալոյծ առաջնորդը հարկաւոր դէպքերում

այցելութիւններ էր անում իր ժողովրդի անդամներին, նրբ հարկաւոր էր ազդու միջամտութիւն գործել զանազան առիթներով»<sup>21</sup>(26, էջ 118):

Բարդասար Հասան-Զալալյանցի մահվանից շուրջ 10 տարի անց՝ 1864թ., Ամենայն Հայոց Մատքենու կաթողիկոսի կոնդակով, Արցախի թեմի առաջնորդ էր կարգվել Սարգիս արքեպիսկոպոս Զալալյանցը<sup>22</sup>(26, էջ 283-285): Լինելով կիրթ ու գրասեր հոգևորական՝ նա կարևոր դերակատարություն ունեցավ վանական համալիրներին և նկնջացիներին կից կրթական հաստատությունների աշխատանքների աշխուժացման գործում: 1867-70թթ., Ամենայն Հայոց կաթողիկոսի հրահանգով ու հանձնարարությամբ, նա գտնվում էր կոստանդնուպոլսում, այնուհետև մի առ ժամանակ ապրում էր Թիֆլիսում:

Արցախահայությունը, կարևորելով հոգևոր հովվի դերակատարությունը հայրենիքի շենացման գործում, Սարգիս Զալալյանցին Շուշի վերադարձնելու նպատակով համախոսական նամակով դիմում է կաթողիկոսին, որտեղ ասված էր. «...որդիական սիրոյ համբուրի համբուրելով զհայրական սուրբ գարշապար գթած և խնամառատ Հայրութնանդ, ամենախոնարհաբար խնդրեմբ չըրկել զմեզ ի մարդասիրական և յԱզգասիրական խնամառատ զթոյն վիճակաւոր հօր, որպէս վայելեալ եմբ մինչև ցարդ զազգասիրական աշխատանս նորա ի վաղուց անտի...»<sup>23</sup>(26, էջ 283-285):

Կաթողիկոսը, հաշվի առնելով ժողովրդի խնդրանքը, Սարգիս Զալալյանցին վերադարձնեց Շուշի: Այստեղ նա ձեռնամուխ նեղավ կրթական կյանքի բարեկարգմանը, կանոնակարգնեց աշակերտների ընդունելության հարցը, նոր ծրագրեր մշակվեցին: 1868թ. հուլիսին թեմերին հանձնարարեց զյուղերում բացել դպրոցներ: «Գյուղերից եկեղեցիքը եթե ունին սեփական դրամ, ... նորա դրամագլխեն միայն մի մասը ծախ անեն, զյուղական ազգային մանկունքը բոլորովին տգիտութեան մեջ չթողնելով»<sup>24</sup>(1, էջ 35):

Սարգիս Զալալյանցը ձեռնամուխ նեղավ ծխական դպրոցների ավելացման գործին: Զգալի տեղաշարժեր կատարվեցին թեմական դպրոցի աշխատանքներում: 1871թ. Սիմոն քահանա Տեր-Խորանյանը գրել է. «Թեմական դպրոցն իր առաջարկությամբ մի ուրախ տաիթ և գրեթե իր առաջին շրջաններից տարբեր և յառաջադեմ շրջան և ուղղութիւն ստացավ»<sup>25</sup>(1, էջ 54):

Սարգիս Զալալյանցի հրահանգով թեմական դպրոցում սկսեցին դասավանդել հայոց պատմություն, հայոց լեզու: Դպրոցն ուներ երեք շենք, որից երկուը Բաղդասար մետրոպոլիտ Հասան-Զալալյանցի էր մնացել, իսկ երրորդը կառուցել էր Սարգիս Զալալյանցը և նվիրել ուսումնարանին<sup>26</sup>(6, էջ 86): Նրա նուանդուն գործունելության շնորհիվ, 1875թ. տվյալներով, Արցախի թեմում գործում էր 42 դպրոց, որտեղ աշխատում էին 51 ուսուցիչներ և սովորում՝ 1.217 աշակերտ<sup>27</sup>(13, ֆ. 56, գ. 3, գ. 43, գ. 140, գ. 182, գ. 52, գ. 50, գ. 280):

Հասարակական կյանքի բարեկարգման ու կենցաղում տիրող հորի բարբերի վերացմանն էր ուղղված արքեպիսկոպոսի կողմից 1872թ. հրատարակված «Բարեկարգութիւնը, տնօրինեալը ի վիճակաւոր առաջնորդէն հայոց թեմին Ղարաբաղու ի Սարգիս արքեպիսկոպոսէն Հասան-Զալալյանց յաղագ կատարման ինչ-ինչ հոգևոր ծիսից հայոց ժողովրդականաց ի նմին վիճակի», որով վերացվում էին նշանադրության, պասկի և հուղարկավորման ծեսերի հետ կապված զանազան շոայլ սովորությները, այդ թվում անհարկի «կերուխումները» և հաստատվում նն շատ պարզ, ժողովրդի համար մատչելի ու վայելու կանոնները<sup>28</sup>(10, էջ 374):

Այդ ամենից բացի նա նաև իր ժողովրդի կենսագիրն էր: Ս.Հասան-Զալալյանը հենդինակեն է «Ճաճապարհորդութիւն ի մեծն Հայաստան» նշանակոր աշխատությունը: Եթեն Հասան-Զալալյան տոհմի հոգևորական ներկայացուցիչներին ցարական իշխանություններն ինչ-ոք չափով հնարավորություն ընձեռնեցին զբաղվելու հայրենաշեն գործունելությամբ, ապա նույնը չի կարելի ասել այդ գերդաստանի իշխանական թեմի մասին: Յարական արքունիքը նրանց ունեցրեց և լիովին դուրս մղեց քաղաքական ասպարեզից: Դեռևս 1897-98թթ. Խաչենի հայերի մի մասը հաստատվում է Բոլնիսում: Դարերից եկած սովորության համաձայն՝ նոր բնակավայրում իրենց ներքին կյանքը կարգավորելու նպատակով նրանք մելիք են ընտրում:

Բոլնիսի Խաչենում մելիք է ընտրվում Հասան-Զալալյան տոհմի ավագ ներկայացուցիչ Ալլահվերդին: «Խաչենցիք... յայնժամ ցան և զիր էին Վրացտանում այլ այլ տեղերումն. յետոյ հաւաքվել են մինչև 80 տունն նորա, յայնժամ Սարգիս արքիերն կոչեաց զնոսա առ ինքն և ասաց նոցա, թէ որովհետև ի մէջ նոցա սովորութիւն կայ մէլիքի ընտրելոյ, վասն այսորիկ շարժէր զնոսա ի կիրս, որ ընտրեսցն յիշեալ հայրն զեղբայրն նորա զԱլավերդը...»<sup>29</sup>(16, գ. 1, գ. 2):

1805թ. մելիք Չումշուր Մելիք-Շահնազարյանի վերադարձն Արցախ վարակիչ էր մյուս մելիքների, այդ թվում մելիք Ալլահվերդու համար: Հայրենիք վերադարձնալու նրա ցանկությունը դժկամությամբ ընդունվեց իշխանությունների կողմից: 1822թ. նոյնմերի 22-ին Վրաստանի

նախակին դատական մարմինների կողմից որոշվել էր մենիք Ալլահվերդի Հասան-Զալալյանին հայտարարել անվստահելի անձ՝ խնդրով ունեցվածքը, իսկ Բոլնիսի Խաչենը դարձնել պետական գյուղ: Այս որոշումը 1827թ. մարտի 12-ին հաստատվել էր Սենատի թիվ 1.387 հրամանով<sup>30</sup>(39, թ. 8):

Ամեն ինչից զրկված՝ Վշտահար մենիք Ալլահվերդին 1827թ. վերադարձավ հայրենիք և նոյն թվականին էլ կնքեց իր մահկանացուն:

Մենիք Ալլահվերդու նղբայրը՝ Ռուստամ քենը, նոյնպես ունեցրել է: Նա ուներ միայն մեկ ծառա և շարունակում էր ապրել Բոլնիսի Խաչենում<sup>31</sup>(39, թ. 8): Հայրենիքում հաստատված և նյութական հնարավորություններից զրկված մենիք Ալլահվերդու զավակները էական դերակատարություն չունեցան 19-րդ դարի Արցախի պատմության մեջ:

Արցախում տիրող քաղաքական կացությանն անդրադարձել է նաև ժամանակաշրջանի մամուլը: «Բացի բուն Հայաստանից Հայք գտանում են այժմ քարական շատ թուով և Ղարաբաղի զավառում, - գրել է «Կոռնկ հայոց աշխարհի» թերթը, - Հովհաններից նորա փոքր առ փոքր մլրդնեցան լենաներում. այնտեղ նորա կառավարում էին 5 ժառանգական մենիքների ծեփքով, որը պարսկաց իշխանութեան տակ էին, բայց թուրքաց իշխաններու զօրութիւնը և գերազանցութիւնը Ղարաբաղում՝ արտաքսեցին նոցա այնտեղից տասն և ութենորդ դարում, իսկ երբոք Ռուսաստանը տիրեց Ղարաբաղին, նորա կրկին վերադարձան»<sup>32</sup>(12, էջ 107):

Մենիքական տների ներկայացուցիչները, վերադառնալով հայրենիք, փորձում էին ոչ միայն նոր շունչ հաղորդել քանդկած օջախներին, այլև ուսական օժանդակությամբ վերակերտել ազգային պետականությունը: Սակայն շուտով նրանց համար պարզ դարձավ, որ այդ ամենը խարկանք է, և զարական իշխանությունը մտադիր չէ կատարել իր խոստումները:

Մենիքներ Զումշուղը և Արքովը, հուսախարված և հիասթափված, 1807թ. դեկտեմբերի 14-ին Մինաս Լազարյանին գրել են. «...մենք մինչև ցյետին կաթիլ արեանն ոչ խնայենք զանձինս մեր վասն հայրենացն Ռուսաստանու և ծարակի գոլով մշտապէս փափազիմք, որ հաւատարմութիւն մեր յայտնի լիցի առաջի ամենառորմ աթոռոյ ն.կ.մ., զ՞ինչ օգուտ, որ ընդ գրուանաւ լինի ծածկեալ»<sup>33</sup>(7, էջ 258):

Հայ հասարակական և քաղաքական շրջանակները, թերևս ուշացած, հասկացան Արցախի մենիքներին և նրանց հպատակներին Վրաստան և այլ շրջաններ տնդափոխելու զարական քաղաքականության նպատակն ու էությունը:

Կտրվելով հայրենիքից, զրկվելով նյութական հնարավորություններից և զինական ուժից՝ Արցախի մենիքները դադարեցին քաղաքական գործոն լինելու հանգամանքից: Ցարական իշխանությունները ժամանակին, մինչև վերջ օգտագործելով մենիքներին, այլևս հաշվի չէին նատում նրանց հետ: Նույնիսկ հայ որոշ գործիչներ հորդորում էին մենիքներին՝ վերստեղծել իրենց զինական ուժն ու վաղմի փառքը և ընթացս շտկել իրավիճակը<sup>34</sup>(7, էջ 258): Բայց դրանք ժամանակավերեալ և ապարդյուն քայլեր էին:

19-րդ դարի կեսերից սկսած Մենիք-Բենգարյանների և Մենիք-Հովսեփյանների մի մասը, անհեռանկար համարելով արցախահայ պետականության վերականգնման հնարավորությունը, վաճառում են հայրենի կալվածքները և հեռանում Անդրկովկասի և Ռուսաստանի առևտրաշահ քաղաքները: Տնտեսական բարեփոխումների և շուկայական հարաբերությունների խորացման պայմաններում 1870-ական թվականներից այս գործընթացն առավել մեծ ծավաններ ստացավ: Նշված ժամանակահատվածում Հասան-Զալալյանների և Մենիք-Իսրայելյանների ժառանգները նույնպես հայտնվեցին աշխարհի տարբեր ծայրենում, իսկ հայրենիքում մնացածներն անց էին կացնում իրենց խոճուկ կյանքը:

Հայկունին, 1885թ. հունիսի 7-ից մինչև օգոստոսի վերջը, ճամփորդելով Արցախի Զքաքերդ, Խաչեն, Վարանդա և Դիզակ զավառներում, Մենիք-Ալլահվերդյանների պալատը տնանելու նպատակով լինում է Գյուլաթաղ գյուղում: Նա գրել է, որ այդ ապարանքում ապրում էր Մենիք-Ալլահվերդյանի ընտանիքը: Նա 12 տորթի աշխատավարձով աշխատում էր Վիլմանի դարաբաղյան ազնվագեղ ծինքի բուժման գործարանում: Միրզաքել Մենիք-Ալլահվերդյանցի կենցաղը չէր տարբերվում համազյուղացիների նիստուկացից<sup>35</sup>(14, էջ 77-78):

Առավել տխուր վախճան ունեցավ Դիզակի Մենիք-Եզանյան-Ավանյանների հայտնի տոհմը: 18-րդ դարի վերջներին, Արցախում բռնկված սովի և մահտարաժամի պայմաններում, Արցախի մենիքական տների մյուս ներկայացուցիչների հետ միասին մենիք Ղահրամանը նոյնպես հաստատվում է Վրաստանում: Իսկ հայրենիքում մնացած Մենիք-Եզանյանների շառավիղներից մենիք Վահանին և մենիք Ալանին Իբրահիմ խանը կրունափոխ է անում: Նրանց են անցնում այդ

գերդաստանի կալվածքներն ու ողջ ունեցվածքը: Յավալիորեն՝ թուրքերը ոչ միայն բռնազավթեցին նշանափոր այդ տոհմի նյութական արժեքները, այլ նաև, որ ամենակարևորն էր, տիրազան դարերի հոլովությում մարքագործված հայ ազնվականական գերդաստանի գենոֆոնդին: Այդ ամենը նրանք նպատակային օգտագործեցին՝ իրենց երկրի պետական կյանքն կարգավորելու, հասարակական-քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքը աշխուժացնելու:

Մելիք-Եգանյանների տոհմից սերված Մելիք-Ասլանովների ներկայացուցիչներն Աղրբնջանի 1918-20թթ. հանրապետության հիմնադիրների շարքում էին՝ դառնալով կառավարության և խորհրդարանի անդամներ:

Խորհրդային տարիներին Մելիք-Ասլանյանները և Մելիք-Եգանյանները կարևոր դերակատարություն ունեն Աղրբնջանի պետական կյանքում: Միաժամանակ նրանք հայտնի էին որպես նշանափոր բժիշկներ և մշակույթի ասպարեզի ներկայացուցիչներ:

Յարական կառավարությունն Անդրկովկասում իր դիրքերն ամրապնդելու նպատակով տեղացի իշխաններին զրկում էր պետական պաշտոններ վարելու իրավունքից՝ դրանք վերապահելով ուս չինովնիկներին:

1840թ. ապրիլի 10-ին ցարը վավերացրեց մի օրենք, ըստ որի՝ տեղական «բարձր դասը»՝ աղաները, բնկերն ու մելիքները դուրս էին մղում վարչական գործունեության ասպարեզից՝ իրքն ցարիկմի քաղաքական նոր խնդիրներին բոլոր անդամների միջև: Մասնաւոր մի տարր<sup>36</sup>(15, էջ 208):

Դեռ ավելին, ցարական արքունիքը հավասար կարգավիճակ սահմանեց մելիքական գերդաստանների ավագ և կրտսեր անդամների միջև: Շուկայական տնտեսության պայմաններում նախկինում զոյլություն ունեցած անտրոենի կալվածքներն արագաթափ հավասարաչափ բաժանվեցին մելիքական տան բոլոր անդամների միջև: «Բաժանիր, որ տիրեն» հայտնի բանաձևն իր ավելիչ և սև գործը կատարեց:

Մելիքական տոհմերի ավագ անդամները ոչ միայն տնտեսապես թուլացան, այլև իրենց հպատակության տակ գտնվող գավառներում կողցրին քաղաքական ազդեցությունը: Մի հարգածով ոչնչացվեցին դարերի բնագրում կարծրացած քարոյական նորմերը: Ավագի խոսքը կրտսերի համար դատարկ հնչեղություն ստացավ: Մելիքական տներում ներքին համերաշխությունը խաթարվեց: Յարական կառավարությունը հայ մելիքներին, զրկելով սեփական տիրույթներից և իրավունքներից, ճարպկորեն օգտագործեց այդ դասի ժառանգած ծգությունը դեպի ռազմավարչական գործը և, ինվանավորելով նրա վառասիրությունը, սերունդ առ սերունդ նրանց ներքաշներ իր զորքերի շարքերը, բայց զգալիորեն ավելի քիչ՝ կառավարման ոլորտի մեջ: Ազնվականական ռազմական ուսումնարանների և կաղենական կորպուսի դրանքը լայնորեն բացված էին մելիքական ընտանիքների երեխանների առջև, որոնք հաճախ այնտեղ էին ընկնում դեռաստի տարիքում, այնուհետև, ծառայելով, հասնում բանակի ամենաբարձր աստիճանների՝ մեծ մասամբ Անդրկովկասում տեղակայված զորքերում, որ նրանց անհրաժեշտ էր գտնում ուղարկել ցարական իշխանությունը: Մելիքական գերդաստանի ավագ անդամներն էլ, որոնք պետությունից որոշակի թոշակ էին ստանում, գերադասում էին իրենց խոհուկ կյանքի վերջին օրերն անցկացնել հայրենի ծվատված կալվածքներում<sup>37</sup>(11, էջ 46):

Հյա մելիքներն այնքան արհամարված ու անտեսված էին, որ նոյնիսկ 1830թ. ապրիլի 24-ին Պասկիչի զեկույցի մեջ Ղարաբաղի պրովինցիայի ազգագրական և դասային պատկերը ներկայացնելիս՝ նրանց մասին ոչ մի տվյալ չի արձանագրվել<sup>38</sup>(40, էջ 13):

1870-ական թվականներին, Անդրկովկասում անցկացված բարեփոխումների և շուկայական հարաբերությունների խորացման պայմաններում, մելիքների կալվածք-ների տրոհման և նրանց ունեղեկման գործընթացը նոր թափ ստացավ: Շուկայական տնտեսության օրենքներին անծանոթ և պահպանողական կենսակերպով ապրող մելիքներն ի վիճակի չեն մրցակցել խաղի նոր կանոններին վարժված առևտրավաշխառուական դասի հետ: Նրանք ստիպված ունեցվածքի և հողերի մի մասը վաճառելով՝ փորձում էին իրենց դրսնորել քաղաքային կյանքի այլ ասպարեզներում:

Նման պայմաններում թաթար խաներն ու բնկերը, զարտուիլի տաքեր ճանապարհներով, կաշառներով և շողորորթությամբ, սիրաշահելով ուս աստիճանավորներին, տեր էին դառնում հայկական զյուղերին և մելիքների նախկին տիրույթներին:

Այսպես, 20-րդ դարի սկզբներին Խաչենի գավառի 35 գյուղերից 19-ը պատկանում էր թաթար բնկերին: Եթե ամեն մի հայ մելիք լավագույն դնարում երկու կամ երեք զյուղերից էր

նկամուտ ստանում, ապա թաթար Զաֆար աղա Զիվանչիրը՝ 23 գյուղերից<sup>39</sup>(33, էջ 9): Հայ զյուղացիությունն անխնա շահագործվում էր թաթար աղաների, բնկնի և ուս շինովնիկների կողմից:

Դրա մասին են վկայում Դիգակի Բանագոր զյուղի բնակչների՝ 1849թ. բազմից գրած բողոք-խնդրագրերը՝ ուղղված Կովկասի փոխարքային և Ներսես կաթողիկոսին: «Ղարաբաղի զնդապես (պոլկովնիկ) Զաֆար Կուլի Խանը, որի հշխանության ներք ենք գտնվում որպես ռահապետներ, - գրում են Բանագորի զյուղացիները, - տանջում է մեզ եւ պատճառում անպատմելի նեղություններ, պատիժներով ու տուգանքներով, մինչև անգամ ամենայն կենցաղավարությունից այժմ էլ զրկված, մատնվել ենք սովի, ...մեր քահանա տէր Մինասի փիլոնը զցել տվեց շան վրա և ստիպեց ծողովրդին երկրագնելով գնալ նրա հետևեց, հայտարարելով՝ թե այդ լինի ձեզ սուրբ և քահանա, որի պատճառով հիշյալ քահանան «նեղարտեց» և մահացավ: Քանի մարդ մեզանից ծեծից մահացել է: Նեղելով, մեր զյուղի բնակչները ցրվեցին այլնայլ տեղեր, ջանալով ազատվել նրա զերությունից...: Հոսալքած բնակչությունը անգամ երանի են տալիս Իբրահիմ խանի ժամանակներին»<sup>40</sup>(32, էջ 204-205, 208):

Բանագորի, Տողի և շրջակա մյուս հայկական զյուղերի բնակչների և Ներսես կաթողիկոսի բողոքների հիման վրա, Շամախի նահանգապետ քարոն Ալեքսանդր Վրանզելի հրամանով, ստեղծվում է հանձնաժողով: Սակայն հանձնաժողովի ներկայացրած նյութերի հիման վրա նահանգապետը մեղադրեց ոչ թե դաժան կալվածատիրոջը, այլ հայ զյուղացիներին և հոգևորականներին, որոնք իբր, չեն ենթարկվել Զաֆար Կուլի աղայի օրինական պահանջներին<sup>41</sup>(21, թղթ. 145, վավ. 216):

Իշխանությունները նրեք զյուղացու հանձնել են զինվորական դատարան՝ իբրև համազյուղացիներին կալվածատիրոջ դեմ գրգռողների<sup>42</sup>(15, էջ 240):

Ղարաբաղի հայերի ծանր վիճակի մասին ներկայացված է արքայի կողմունակությունը Սարգիս Զարայանցի՝ 1849թ. հունիսի 2-ին Ներսես կաթողիկոսին հասցեագրված նամակում: Արքայի կողմունակությունը գրել է. «Մենիսի Ղուլին այս երկրամասում, ստանալով Ռուսաստանի աջակցությունը, բոլոր հայերին մահմեղականների ստրուկն է դարձրել»<sup>43</sup>(21, թղթ. 145, վավ. 212):

Իրենց չարագործություններով Ղարաբաղի հայ բնակչության համար կատարյալ պատուհաս էին դարձել Մեհտի Ղուլիի քույր Գոհեր աղան, Խանլար աղան և ուրիշներ<sup>44</sup>(30, թղթ. 411, էջ 461):

1837թ., նրեք Նիկոլայ Առաջին այցելեց Հայաստան, Ղազախի հայ զյուղացիները, օգտվելով ատիթից, ցարին խնդրեցին իրենց ազատել թաթար աղաների բռնաճշումներից<sup>45</sup>(38, թ. 6):

Իրենց դաժանությամբ և անմարդկային վերաբերմունքով թաթար բնեկերին չեին զիջում ուս չինովնիկներն ու պաշտոնյաները: Գրավյալ նոր տարածքների ազգաբնակչությունը հալածվում էր ծանր հարկերի, տուրքերի և պարհակների տակ:

Միայն 1841-46թթ. Շուշի քաղաքից հավաքագրվել է 12.422 տորթի 36 կոպեկ ակցիզային հարկ: Այդ նույն ժամանակահատվածում քաղաքի համար ծախսվել է ընդամենը 2.106 տորթի 15 կոպեկ<sup>46</sup>(38, թ. 2-3):

Անգամ Գանձասարի վանքը հարկ ու տուրքերով ծանրաբերներ: 1849թ. ապրիլի 23-ին Բաղրամար մետրոպոլիտը դիմում է Կովկասի փոխարքա Վորոնցովին՝ խնդրելով Գանձասարի վանքն ազատել չափազանց մեծ հարկերից: Նա փոխարքային տեղեկացնում է, որ պարսից տիրակալների ժամանակ վանքն ուներ բազմաթիվ արտոնություններ, որը ծաղկում ու քարգավաճում էր, միաժամանակ ընդգծում տուսական իշխանությունների անհարգալից վերաբերմունքի մասին, որի պատճառով վանական տնտեսությունը կանգնել էր կործանման եզրին<sup>47</sup>(32, էջ 205-206):

Շուրջ 15 տարի Բաղրամար մետրոպոլիտը պայքարեց մարսատուն դարձրած Ամարասի վանքի իրավունքները վերականգնելու համար: Իշխանությունների հետ երկարատև քաշրշուկներից հետո 1849թ. Բաղրամար մետրոպոլիտը վերջնական շահում է դատը. մարսատունը տեղափոխվում է Կարիագինո, իսկ վանքը դրվում է Արցախի իրավասության տակ<sup>48</sup>(10, էջ 141):

XIX դարի 80-ական թվականներից սկսած՝ կովկասահայության, այդ թվում՝ արցախահայության համար պարզ դարձավ, որ Ռուսաստան ամենին նպատակ չուներ վերականգնելու հայկական պնտականությունը:

Հայ հանրության մի հատվածի մոտ ձևավորվում է այն ճիշտ մտայնությունը, որ ազգային պետականությունն անհնարին է վերակերտել առանց ազատագրական պայքարի: Յարական ինքնակալությունն ամեն կերպ փորձում էր բարորի մեջ սպանել այդ գաղափարը:

1895թ. հունիսին Ռուսաստանի արտարին գործերի նախարար Լոբանով-Ռոստովսկին Պետերբուրգում Անգլիայի դեսպանին խոստովանել է. «Ռուսաստանը չի ընդունում, որ Փոքր Ասիայում ստեղծուի մի շրջան, որ կարող է կորիզ դառնալ հայկական անկախ թագավորութեան»<sup>49</sup>(3, էջ 222):

19-րդ դարի վերջերին Թուրքիայում Ռուսաստանի դեսպան Նելիդովը գտնում էր, որ ռուսահայերն ունեն անջատողական ճգումներ և համաշխարհային հեղափոխության խմբից են<sup>50</sup>(31, էջ 9-10; 25, էջ 17; 17, էջ 151-155):

Վ.Ի.Լենինն իր «Հեղափոխություն և հակահեղափոխություն» հոդվածում, որը տեղ գտավ միայն նրա երկերի առաջին հրատարակության մեջ, իրավագիրեն նշել է. «Յարական Ռուսաստանի վերաբերմունքը հայ ժողովրդի հանդեպ պայմանավորված էր նրանով, որ իշխանությունների աչքին հայերը դարձել էին հեղափոխության նոյնափակ խորհրդանշի Կովկասում, ինչպիսին համարվում էին հրեաներն արևմտյան և հարավ-արևմտյան Ռուսաստանում»<sup>51</sup>(36, էջ 482-483):

Պատահական չե, որ 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին ռուսական պաշտոնական մամուլը հայերին մեղադրում էր «սենապարատիզմ» անջատողականության մեջ, որի շնորհիվ տարածվում էր այն տպավորությունը, թե բոլոր հայերը փուանզավոր են ռուսական շահերի տեսակետից և, իբրև այդպիսիք, պետք է հալածվեն<sup>52</sup>(5, էջ 197-198):

Չնայած քննարկվող ժամանակահատվածում Թուրքիան և Ռուսաստանն անհաշտ և ոխնակ հակառակորդներ էին, այնուամենայնիվ, հայկական պետության լինելու և չլինելու հարցում համալսորերդ և համակարծիք էին:

Թուրք պետական գործիչներից մեկը՝ Նազըմ քեյս առել է. «...եթէ նոյնիսկ մեր յօժար կամքով իշխանութիւն տանք հայերին՝ Ռուսաստանը մեզ պիտի չտայ, որ մի Հայաստան ստեղծենք իր սահմանի վրայ...»<sup>53</sup>(3, էջ 225):

Այսպիսով ցարական կառավարության մելիքական տների վերացման քաղաքականությունը կործանարար ենտևանք ունեցավ: Արցախահայությունը ոչ միայն կորցրեց պետականության վերականգնման հնարավորությունը, այլև զրկվեց ուղղորդող ուժից:

Անվերադարձ ոչնչացվեցին պետական կյանքը սնուցող ինստիտուտները: Ասպարենզից հեռացան երկրի և ժողովրդի հոգսերով ապրող ազնվականության ներկայացուցիչները:

## Գրականություն

1. «Այրարատ», թիվ 3, 1868:
2. Առաքելյան Գ., Գանձակ-Ելիզավետպոլի բնակչությունը XIX դարում, Երևան, 2003:
3. Ասատրյան Հ., Հատընտիք, Երևան, 2004:
4. Բալայան Մ., Հայ Աղվանից եկեղեցին (սկզբավորումից մինչև մեր օրերը), Ստեփանակերտ, 2009:
5. Գիլլասանդաննան Ա., Կովկաս երկիրը, ժողովուրդը, պատմութիւնը, մաս Ա, Փարիզ, 1943:
6. Գրիգորյան Հ., Հարությունյան Գ., Արցախի դպրոցը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Երևան, 2005:
7. Դիլոյան Վ., Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, 1989:
8. Երիցյան Ա., Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի Հայք XIX դարում, հ. Ա, Թիֆլիս, 1894:
9. Լալայան Ե., Երկեր, հ. 3, Երևան, 2004:
10. Լեռ, Պատմութիւն Ղարաբաղի Հայոց Թեմական հոգենոր դպրոցի, Թիֆլիզ, 1914:
11. Լիսիցյան Ստ., Լեռնային Ղարաբաղի հայերը (ազգագրական ակնարկ), «Հայ ազգագրական և բանափրություն», հ. 12, Երևան, 1981:
12. «Կոռունկ հայոց աշխարհի», թիվ Բ, 1862:
13. ՀԱԱ, ֆ. 56, գ. 3, գ. 173, գ. 43, գ. 140, գ. 182, գ. 52, գ. 50, գ. 280:
14. Հայկունի, Ուղեղնազական ակնարկներ, Երևան, 2010:

15. ՀԺՊ, հ. V, Երևան, 1974:
16. ՀՀԳԱԱ, Պատմության ինստիտուտի արխիվ, Լեռյի ֆոնդ, գ. 1, գ. 2:
17. Հովհականյան Կ., Հայ ազգայնականությունը որպես հակազդեցություն ռուսական կայսերապաշտությանը և ազգայնականությանը, «Բանքեր Հայաստանի պետական տնտեսազիտական համալսարանի», թիվ 1, Երևան, 2009:
18. Մաղայան Ա., Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII–XIX դդ., Երևան, 2007:
19. Մատենադարան, Ա.Երիցյանի արխիվ, թղթ. 155, փակ. 33:
20. Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 105, գ. 13, փակ. 192:
21. Մատենադարան, Փ. Կաթողիկոսական դիվան, թղթ. 145, փակ. 216:
22. Մկրտումյան Լ., Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսությունը 17-19-րդ դարերում, թեմնածուական ատենախոսության սեղմագիլ, Երևան, 2001:
23. «Մշակ», թիվ 94, 1888:
24. Շահիսաքոննանց Յնիի., Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, Վաղարշապատ, 1842:
25. Պատիկնանց Հ.Յարութիւն Վրդ., Հայ ժողովրդի ազատագրութեան պայքարը (ԺԹ-Ի դդ.), Երևան, 2004:
26. Վավերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ., Երևան, 2001:
27. «Տարագ», թիվ 7-8, 1913.
28. Ռաֆֆի, Երկնրի ժողովածու, հ. 9, Երևան, 1987:
29. АКАК, т. IV, ч. I.
30. АКАК, т. VII.
31. Амфитеатров А., Армянский вопрос, „Пушкинская скоропечатная”, Пг, 1906.
32. Документы и материалы по истории Армянского народа, социально-политическое и экономическое положение восточной Армении после присоединения к России (1830-1870), под ред. Н.Тавакалияна, Ереван, 1993.
33. Заварян С., Экономические условия Карабага и голодь 1905-1907гг., С.Петербургъ, 1907.
34. Израелов Г., Село Касапет, Елизаветпольской губернии Джеванширского уезда, Сборник материалов для описания местностей и племен Кавказа, вып 13, Тифлис, 1892.
35. „Кавказская Старина”, Тифлис, 1872.
36. Ленин В. (Ульянов В.), Собр. соч., т. VI, М., 1924.
37. Присоединение Восточной Армении к России, т. 1, Ереван, 1972.
38. РГИА, ф. 1268, оп. 3, д. 426.
39. РГИА, ф. 1268, оп. 3, д. 426.
40. РГИА, ф. 1377, оп. 1, д. 5.
41. Тунян В., А.С.Грибоедов и Армения, Ереван, 1995.

Политика царской России по ликвидации меликских родов Арцаха: цели и последствия.

**В.Р.Балаян**

*Rезюме*

После присоединения Арцаха к России царское правительство вело политику по ликвидации меликских родов, которая имела губительное последствие для армян края.

Армяне Арцаха потеряли не только возможность восстановления государственности, но и лишились направляющей силы.

Безвозвратно были уничтожены последние осколки армянской государственности. Ушли с арены те представители дворянства, которые жили заботами страны и народа.

The Imperial Russia's Policy on the Elimination of Meliks' Clan of Artsakh:  
Objectives and Consequences.

**V. R.Balayan**

## *Summary*

After Artsakh had joined to Russia the imperial government pursued a policy to eliminate the clan of Meliks, which had disastrous consequences for the Armenians of the region.

Armenians of Artsakh lost not only the possibility of the restoration of Statehood but also the guiding power.

The last fragments of Armenian Statehood were irreversibly destroyed.

The representatives of the nobility who lived with the country's and the people's concerns left the arena.

### **ԱՐՅԱԽ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱԼՄԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ՅՉԵՆՍ ՅԱՊԻСՔ ԱՐՑԱԽԻ ԳՈՏՎԱԿԱՆ ՄԱՐԴԿԱՆԱԿԱՐԱՆ**

1(25) 2012

**ՀՏ 371.31:940.53(479.243)**

**Պատմության դասավանդման մեթոդիկա**

**ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱՋՄՈՒՄ ԱՐՅԱԽԱՅԱՅՆԻ ՄԱՐԴԿԱՆԱԿԱՐԱՆ  
ԴՐՎԱԿՆԵՐԸ (ԿՈՒՐՍԿԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻ ՕՐԻՆԱԿՈՎ) 9-րդ ԴԱՍԱՐԱՆՅԻՆԵՐԻ  
ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԻ ԱՐԱԿՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ**

**Ա.Ա.Կայան**

Ավելի քան 67 տարի է անցել Հայրենական մեծ պատերազմի ավարտից, սակայն այդ դաժան պատերազմի հետևանքները և արհավիրքները մարդկության հիշողությունից չի անհետանում: Չի մոռացվի այն, որովհետև այդ հրեշավոր պատերազմը խեց միլիոնավոր մարդկանց կյանք և ամայացրեց ու ավերեց մի շարք երկրներ:

Պատմությունը հարուստ է բազմաթիվ ու բազմապիսի պատերազմներով, որոնցից յուրաքանչյուրն անկրկնելի է, ինքնատիպ թե իր յուրահատկությամբ, թե ծավալման ընթացքով ու մասշտաբներով, թե իր հետևանքներով: Այս առումով Հայրենական մեծ պատերազմը, որպես երկրորդ համաշխարհային պատերազմի էական ու անբաժանելի բաղկացուցիչ մաս, իր նշանակությամբ ու հետևանքներով աննախադեմ երևույթ էր ժողովուրդների ու ազգերի բազմամյա տարեկրության մեջ:

Յուրաքանչյուր առարկա, հատկապես պատմությունը, աշակերտների հայրենասիրության ողով դաստիարակելու հնարավորություն է տալիս: Միանգամայն ակնհայտ է, որ այս խնդիրների իրականացման գործում կարևորագույն տեղ պետք է ունենա «Հայոց պատմության» դասընթացի ուսումնասիրությունը:

Հայրենական մեծ պատերազմի թեման 9-րդ դասարանում անցնելու ժամանակ ուսուցիչը պետք է աշակերտների մեջ սեր և նվիրվածություն արթնացնի հայրենիքի, իր ժողովրդի նկատմամբ:

Այդ առումով անշափ կարևոր է Հայրենական մեծ պատերազմում արցախահայության դրվագների ներկայացումը: Ուսուցիչը պետք է հանգամանորեն պատմի ֆաշիստական Գերմանիայի՝ ԽՍՀՄ վրա ուխտադրժորեն 1941թ. հունիսի 22-ին հարձակվելու հանգամանքները:

Հայրենիքի ազատության և անկախության համար ուրի կանգնեց խորհրդային բազմամիլիոն ժողովուրդը: Աշակերտներին պետք է հիշեցնել, որ իրենց պապերից ու հարազատներից շատերը փառքով վերադարձան: Օրինակներ է բերվում այն սպաներին ու բանակայիններին, որոնք շքանշաններով ու մեղալներով վերադարձել են, իսկ շատերը հերոսարար ընկել մարտերում:

Կորսկի շրջանում տեղի ունեցած ճակատամարտը Հայրենական մեծ պատերազմի և ամբողջ երկրորդ Համաշխարհային պատերազմի մեծագույն ճակատամարտերից մեկն է:

Կորսկի աղեղում ծավալվեցին դաժան մարտեր, որտեղ խորհրդային ժողովուրդը, նրա զինված ուժերը հասան վիթխարի պատմական հաղթանակի: Այդ ճակատամարտը որոշենց երկրորդ համաշխարհային պատերազմի հետագա ընթացքը ի օգուտ հակահիտլերյան կողմիցիայի:

Կորսկի ճակատամարտում երկու կողմերից մասնակցել են չորս միլիոն մարդ, 69 հազար իրանոց և ականանետ, ավելի քան 13 հազար տանկ և ինքնագնաց իրանոլ և մոտ 12 հազար